

ՀԱԼԷՊՑԻ

Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷՋ

Սրբազան արարողութեանէն վերջ վանքիս Մատենադարանի դահլիճին մէջը, Ուխտիս Ընդհ. Արքահօր Հ. Սրապիտոն Վրդ. Ուլուհոճեանի նախագահութեամբ՝ տեղի ունեցաւ տարեկան բանախօսութիւնը, Մխիթարի յիշատակին նուիրուած: Օրուան յարգելի բանախօսն էր Հ. Խորէն Ճլրղեան, որ կէս ժամ տեւողութեամբ իր դրաբար ու բանաստեղծօրէն հիւսուած ներբողով պատկերացուց Մխիթարի կեանքը ու դործը, որոնք ազգային սկզբունքով ու նպատակներով դրոշմուած, ամբողջական նուիրումն եղան իր ազդի զարթումին:

րով արժանաւոր յաջորդներն ու չարունա-
կողներն ըլլան իրենց նախորդներուն ազ-
գանուէր գործին ու կտակուած ձեռնարկ-
ներուն. եւ Մխիթարի գերմարդկային
պայքարն ու յաղթանակը, որ դժուարու-
թիւններու առջեւ մեր վստահութեան ե-
րաշխիքն է, ըլլալ նաեւ մեր լուսաւոր ա-
ռաջնորդը, մինչեւ որ պայծառ իրականու-
թիւններու փոխակերպուին մեր հեռա-
պատկերները:

Մայիս 26ին Մուրատ-Ռաիփ Վարժարանին մէջ կատարուեցաւ տարեկան յիշատակը անմահ բարերար՝ Մխիթար Աբբահօր և Մուրատ-Ռաիփայէլի: Հանդէսը բացուեցաւ Մխիթարայ քայլերդով, որմէ վերջ աչակերտուիւնը երգեց նաեւ Հոմիփ Փուլչինեան քայլերդը:

Ոսօք առաւ նախ Վարժարանիս եւ Մխիթարեան Լիւիտիս բարեկամ հրապարակագիր Ասպետ Յ. Վեննի, որ խտալերէն լեզուով ծանօթացուց օտար հիւրերուն զոյգ բարերարներու զէմքերը եւ Մխիթար ու իր Միաբանութիւնը որ պոյնքան նուիրումով կը վարեն Մուրատ-Ռափ. դարաւոր Հաստատութիւնը զէպի նոյն բարերարներուն երազած ու պաշտած գաղափարը՝ Հայ ազգի լուսաւորութիւնը եւ անոր վերելքը. անդրադարձաւ Հայու անցեալին ու մանաւանդ ապագային. «Հայ մարտիրոսներու արիւնը պիտի արգասաւորէ եւ Ազգին ճակատագիրը աւելի բարեւոտ ու բընիկ պիտի ընէ»:

Վարդուժանի «Ակուլթ»-ի արտասանութեան էն եւ Հայկ Մահտեսեան աշակերտին խանդավառ խօսքերէն յետոյ՝ որոնցմով կը հրահրէր երախտադիտութեան զգացումներ բարեբարոնեւուն եւ դաստիարակ Հայրերուն հանդէպ, յաջորդեց կուռ բանասէնի, որ «Առանց դոհողութեան, ըսաւ, ոչ մէկ արժանիք կարելի չէ չահիլ: Մուրաւիւթական դանձը ազգին գիտութեան ուսմաններ կառուցանելու համար. Միւլիսի դաստիարակութեան, որովհետեւ հոն հայրենասէր ըլլալու համար... Լաւ քրիստոնեաներ ըլլալ. առանց կրօնքի ու բարոյականի՝ հայրենասիրութիւնը կեղծ դիմակ մըն է: Պարկեշտ քրիստոնեան խղճի պարտք ունի սիրելու իր անձին ու ընտանիքին հետ նաեւ իր Ազգը»:

Նուիրական հանդէսը փակուեցաւ ջերմ
միջոցութեամբ մը մէջ Վարժարանին քայլեր-
գով :

hUf.

Ամէն երկնքի տակ, ուր Միւրթարի զաւակները իրենց վստահուած առաքելութեան լծուած են, Ապրիլ 27ին նուիրական յարկի մը տակ կը կատարուի տարեկան յիշատակը իրենց անմահ Հօր:

Նոյն օրը Մխիթարեան վարժարանի պարտեզին մէջ հաւաքուած էր աշակերտուութիւնը, Մխիթարեան եւ Մուրադ-Ռաֆայէլեան Նախիկին Աշակերտներ, որոնցմէ յիշատակենք Պրն. Լեւոն Մաթոսեան եւ Պրն. Յովսէփ Ամպարեան, բարեկամներ եւ ստուար թիւով աղգայիններ։ Պարտեզին կեդրոնը յարդարուած էր Ս. Պատարազի կոթողին, որուն մօտիկը ծաղիկներու ու խորանը, որուն զբոսանքի տեղը Մխիթարի գրասանդներու մէջ կ'երեւէր Մխիթարի կիսանդրին։

Հասարակաց ներկայութեան բացօթեայ մատուցուեցաւ ձայնաւոր պատարագը, բաղմածայն երգեցողութեամբ վարժարանիս աշակերտներուն եւ Անարատ Յղութեան Քոյրերու աշակերտուհիներու։ Սըրբազան արարողութեան իբրեւ փակում՝ Հ. Միքայէլ Յովհաննէսեան «Յիշատակ արդարոց օրհնութեամբ եղիցի» բնարարդարաց օրհնութեամբ ստուածային Նախախնունով, խօսեցաւ աստուածային Նախախնութեան հանդէպ ունեցած Միխիթարի մեծ հաւատքին վրայ։

Պատարագէնն վերջ «Զարթիր աշխարհ»-ը սկսէր զբաղան ու երաժշտական հանդէսը: Վարժարանին տեսուչ Հ. Գերոզէ Վրդ. Զրաքեան բացումէն վերջ՝ խօսեցաւ «Մխիթար իբրեւ դաստիարակ եւ Մխիթարեան դաստիարակութեան» մասին. ըսելով թէ «Մխիթարի կրթական հոգին չարունակէ թեւածել ուրոր իր հաստատուութիւններուն մէջ, ուր ինքնայատուկ դրութիւն մը կը բնորոշէ աշակերտներուն տրուած դաստիարակութիւնը» իջաւ այդ դաստիարակութեան մինչեւ մանրամասնութիւններուն:

Բեմ ելավ Տիար Թովմաս Գոչեկեան և «յանուն Մխիթարեան եւ Մուրատ-Ռաֆայելեան Նախկին Աշակերտներուն» խօսք ատենելով, համառօտիւ բաց քանդակօրէն

ցուցադրեց Մխիթարն ու իր գործը. «Ան-
մահն Մխիթար Արքահօր անունն ու յիշա-
տակը, ըսաւ, յաւէտ երախտագիտօրէն
պիտի յիշուի ամէն անոնց կողմէ, որոնք
ըլլայ մանուկ հասակէն, ըլլայ պատանի,
Մեծանուն Հայորդիին յղացած ու հաս-
տատած լոյսի ու գիտութեան փարոսէն
առաջնորդութեան իրենց կեանքին մէջ» ու
եզրակացուց. «Փառք ու պատիւ Մխիթա-
րի. թո՛ղ իր անունը յաւիտեանակնօրէն
յիշուի իբր Բարեբար մը, Ազգայէր մը,
որուն չնորհիւ տասնեակ սերունդներ մեծ-
ցան ու զարգացան, պատիւ բերելով Հայ
Ազգին»:

Բանախօսութիւններն ընդմիջուեցան երաժշտական բաժինով. վարժարանին աշակերտներէն կաղմուած ջութակի խումբը նուազեց զանազան կտորներ, «Կանչէ կոռնկ, կանչէ», «Մայր Արաքսի» եւ ուրիշներ. ինչպէս նիւթերէն առաջ ու վերջը կ'արտասանուէին օրուան յիշատակին նըկողած բանաստեղծութիւններ :

Օրուական բանախօսան էր՝ Վարժարանին Ուսումնապետ Հ. Գեորգ Վրդ. Ոսկեան, որ նրւթ առնելով «Մխիթար վերանորոգիչ Հայ լեզուի» շէշտեց եւ իր աշակերտներուն ու յաջորդներուն Հայ դրարար լեզուի վերակազմութեան տեսակէտով կատարած հսկայ դերը, պրպտումներն ու յոգնութիւնները, լոյս բերելու համար Հայկազեան բառարանը եւ անոր նման հսկայ գլուխ դործոցները, միջազգային դասականներու նախ դրարար եւ ապա աշխարհաբար լեզուով թարգմանութիւնները եւ ամէն կարգի ու նրւթի հրատարակութիւնները, որոնք հիմը դրին գրական ու աղփային մեր գարթօնքին :

Փակման խօսքը տրուեցաւ Վարժարանին անգլիերէն լեզուի ուսուցիչ՝ Պրն. Մատթէոս փափաղեանի, որ խօսելով Մխիթարի բեղուն կեանքին եւ անոր կրած հալածանքներու մասին, ըսաւ թէ ասոնք՝ ազգային աղնուական դատին լծուած Մխիթարի սրտին համար զերազոյն զոհու նակութիւններ էին, եւ թէ հալածանքները՝ ինչպէս ամպերը՝ անզօր են տեսականապէս վարազուրելու արեւային ճշմարտութիւնները, ու վերջացուց. «Միրելի ազգակիցներ, թող ազգայարօյցն Անմահ Մխիթարի աստուածաշնորհութեան անսահման սէրը եւ հայրենասիրութեան սրբազան հուրը պարարեն մեր էութիւնը, եւ արժանի ընեն մեզ գործելու Աստուծոյ փառքին եւ մեր բազմաչարքար Ազգին բարօրութեան եւ յառաջդիմութեան համար:

